«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 27-01/02

ք. Երևան,Արշակունյաց 5, 417 սենյակ 14.09.2018թ. ժամը 15:00

«ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանի՝ սնանկության վարույթում գույքերի աճուրդների կազմակերպման և անցկացման հայտարարությունների վերաբերյալ 13.08.2018թ-ի գրության հետագա ընթացքը ապահովելու նպատակով, սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու և գրության մեջ նշված փաստական հանգամանքների քննության համար՝ սեպտեմբերի 14-ին ժամը 15.00՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
«ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանի՝ սնանկության վարույթում գույքերի աճուրդների կազմակերպման և անցկացման հայտարարությունների վերաբերյալ 13.08.2018թ-ի գրության հետագա ընթացքը ապահովելու նպատակով, սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, գրության մեջ նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ՝
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Սողոմոնյանի հանձնաժողովին ներկայացրած փաստաթղթերը, մասնավորապես հայտարարությունները նոր հաշվեհամարներով տրված լինելը հավաստող ապացույցները: Ներկայացրեց, որ սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Սողոմոնյանը, ըստ էության, վերացրել է կարգապահական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացած խախտումները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկեց կարգապահական վարույթը կարճել:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 5
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՝
1. «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանի՝ սնանկության վարույթում գույքերի աճուրդների կազմակերպման և անցկացման հայտարարությունների վերաբերյալ 13.08.2018թ-ի գրության հիմքով սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել, քանի որ սնանկության գործով կառավարիչը վերացրել է կարգապահական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացած խախտումները:
2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան